

## ՍՈՎԵՏԱԷԱՅ ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԿՏԱՎՈՐԸ


(Ա. Ս. Ղարիբյանի ծննդյան 70-ամյակի առիթով)

### Հ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանը ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին, Արտաշատի շրջանի Սյգեզարդ (Գարդալու) դյուղում: 1919 թ. ավարտել է Երևանի ուսական գիմնազիան: Նա աճել և իր գիտական-մանկավարժական գործունեությունը ծավալել է սովետական տարիներին. Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո միայն: Երևանի պետական համալսարանում ապա ասպիրանտուրայում նա լեզվաբանական լուրջ պատրաստություն և շիմնավոր գիտելիքներ ձեռք բերեց աշակերտելով անվանի հայագետներ Հ. Աճառյանին, Մ. Արեղյանին, Հ. Մանանդյանին, Ե. Ղափանցյանին:

1931 թ. Ա. Ղարիբյանը, փայլուն հաջողությամբ ավարտելով ասպիրանտուրան, ամբողջությամբ նվիրվեց գասախոսական և գիտահետազոտական աշխատանքի: Չափազանց բազմազան, արգասավոր ու բնդարձակ է եղել նրա անցած տարիների գործունեությունը. նա զբաղվել է լեզվաբանությամբ, մանկավարժությամբ, գիտական ղեկավար աշխատանքով, գասախոսական և գիտահետազոտական բարձրորակ կադրեր պատրաստելու պատվավոր գործով:

Ավելի քան երեք տասնյակ տարիների ընթացքում նա Անդրկովկասի (Երևանի, Բաքվի, Թբիլիսիի, Լենինականի) բարձրագույն ուսումնական հաստատություններում գասախոսություններ է կարդացել ժամանակակից գրական հայերենի, հայոց լեզվի պատմության, գրաբարի, հայոց լեզվի քերականության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի մեթոդիկայի վերաբերյալ և մշակել է այդ դիսցիպլինների դասավանդման հիմունքները: 1937 թ. նա «Հայոց լեզվի հոգնակիները և նրանց լեզվաբանական



արժեքը» թեմայով թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 'Իրանից երեք տարի հետո՝ 1940 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա («Հայ բարբառների մի նոր ճյուղ») և ստացել դոկտորի գիտական աստիճան, նույն թվականին էլ ստացել է նաև պրոֆեսորի կոչում: 1954 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 1947 թ. Ա. Ղարիբյանն ընտրվել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1960 թ.՝ ակադեմիկոս:

Մեծ է Ա. Ղարիբյանի վաստակը մանկավարժական կադրեր պատրաստելու գործում: Լեզվաբանության և հայագիտության զանազան բնագավառների՝ գրաբարի, արդի հայերենի, հայոց լեզվի մեթոդիկայի, հայկական դպրոցներում ուսաց լեզվի դասավանդման և այլ մասնագիտությունների գծով նա պատրաստել և ղեկավարել է շուրջ հինգ տասնյակից ավելի ասպիրանտուրաներ, որոնք հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ և սյժմ աշխատում են ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Նրա պատրաստած կադրերից մի քանիսը Անդրկովկասում լեզվաբանության բնագավառի լավագույն աշխատողներ են:

Ա. Ղարիբյանը գիտական-դասախոսական աշխատանքը հաջող կերպով զուգակցում է հասարակական և վարչական աշխատանքի հետ. նա ավելի քան 25 տարի ղեկավարել է Երևանի և Արովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը, Իր հիմնադրման օրից՝ 1943 թ. մինչև 1950 թ. և 1957 թ. մինչև 1962 թ. ղեկավարել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը: Նրա ջանքերով լեզվի ինստիտուտում կազմվել է հայոց լեզվի բարտարան, որը հատուկ բազա է հանդիսանում հայագիտական հետազոտությունների համար:

1962 թ. Ա. Ղարիբյանը ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը կից գրադարանային խորհրդի նախագահն է և ֆունդամենտալ գրադարանի դիրեկտորը: Երկար տարիներ նա ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի, գրականության, արվեստների տեսության և պատմության ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող խորհուրդը: Նա հմտորեն ղեկավարում և ուղղություն է տալիս գիտական կարևոր աշխատանքներին, նրա ղեկավարությամբ ու մասնակցությամբ են ստեղծվել բազմաթիվ ժողովածուներ, բառարաններ, դասընթացներ բուհերում ու գիտահետազոտական ինստիտուտներում:

Ակադեմիկոս Ղարիբյանը մասնակցել է արևելագետների (Մոսկվա), հնչյունաբանների (Վիեննա), լեզվաբանների (Բուխարեստ), ինչպես նաև հնագետների ու ազգագրագետների միջազգային գիտական կոնգրեսներին: Բարձր գնահատելով նրա ծառայությունները, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը «Լեզվաբանության բնագավառում ունեցած մեծ վաստակի համար և ձեռնարկյալ յուրանասունամյակի կապակցությամբ» Ա. Ս. Ղարիբյանին պարգևատրեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

\* \* \*

Ընդարձակ ու բազմազան են եղել Ա. Ղարիբյանի գիտական հետաքրքրության շրջանակները: Նրա գրչին են պատկանում շորս տասնյակից ավելի մենագրական ուսումնասիրություն, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, դասընթացներ ու բառարաններ, իսկ գիտական հոդվածների թիվը անցնում է հարյուրից: Նա զբաղվել է հայոց լեզվի պատմության, բառարանագրության, քերականության, բարբառագիտության, լեզվի մեթոդիկայի, ուղղագրության, ուղղախոսության և հայագիտության այլ բնագավառների ուսումնասիրությամբ, ստեղծել բազմաթիվ արժեքավոր գիտական աշխատություններ, որոնցից հատկապես աչքի են ընկնում «Հայոց լեզվի քերականություն», «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն», «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ», «Հայ բարբառագիտություն», «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ», «Դպրոցական ուղղագրական բառարան», «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և ուղղախոսության ուղեցույց», «Ռուս-հայերեն բառարան» և այլն:

Գրեթե չկա լեզվաբանական որևէ բնագավառ, որով հետաքրքրված և զբաղված չլինի Ա. Ղարիբյանը: Սակայն նրա գիտական ծառանգության առավել ծանրակշիռ ու արդյունավետ բաժինը բարբառագիտությունն է, որը դարձավ նրա ստեղծագործության հիմնական ուղենիշը:

Բարբառները, լինելով ընդհանուր լեզվի սարքերակները, գիտական հիմք են տալիս պարզաբանելու, ստուգաբանելու և բացատրելու ընդհանուր լեզվի ձևերը: Բարբառների ուսումնասիրության միջոցով հնարավոր է լինում ճշտել լեզվի պատմության, պատմական քերականության, տեսության և այլ հարցեր, քանի որ սրանք հանդիսանում են մայրենի լեզվի փաստերի մի վիթխարի գանձարան: Բարբառներն օգնում են ազգային լեզվի երևույթների և օրինաչափությունների ուսումնասիրմանը, որով և էլ ավելի կարևոր է դառնում բարբառագիտությունը: Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, մեծանուն հայագետ Հ. Աճառյանից հետո, իր բարբառագիտական աշխատություններով ավելի ևս բարձրացրեց հայերենի բարբառների ուսումնասիրման նշանակությունը:

Ա. Ղարիբյանը, իր ուսումնասիրությունների մեջ վեր հանելով բարբառների դերը, միաժամանակ նշում է, որ բարբառների հարատևումը ժողովրդի դարավոր հետամնացության հետեվանք է եղել, ուստի նրանք սովետական կարգերում, ոչ շատ հեռու ապագայում, պիտի անհետանան:

1953 թ. հրատարակած «Հայ բարբառագիտություն» գրքում նա իր ուսումնասիրած նախորդ բարբառների թվին (չուրջ 20) ավելացրեց վեց նորահայտ բարբառներ (Քեսաբի, Սվեգիայի, Բեյլանի, Ղարադաղի, Քավրիզ-Մոզդոկի և Բերդի), շորս բարբառներ, որոնք ենթարարառ համարվելով անուշադրության էին մատնվել (Հաճրնի, Դիադինի, Ողմի, Մարաշի), և մեկ միջճյուղային բարբառ, որը թեև նկարագրված էր, սակայն հեղինակը նորից վերամշակման ենթարկեց (Արեշ—Հավարիկի):

Այս նոր բարրառների նկարագրությունը և հայտնաբերված լեզվական փաստերը հիմք սվեցին Ա. Ղարիբյանին վերանայելու հայ բարրառների ձևաբանական դասակարգումը, ինչպես նաև սահմանելու բարրառը որոշող հատկանիշները, հիմնովին վերամշակելու բարրառների համեմատական հնչյունաբանությունը և ձևաբանությունը:

1909 թ. ակադեմիկոս Հ. Աճառյանը հրատարակեց հայ բարրառագիտության մեջ դարագլուխ կազմող իր «Classification des dialectes arméniens» ֆրանսերեն լեզվով գրված աշխատությունը. դրանից երկու տարի հետո՝ 1911 թ. Ելմինյան ազգագրական ժողովածուի մեջ լույս տեսավ Հ. Աճառյանի «Հայ բարրառագիտություն» աշխատությունը, որի մեջ հեղինակը ներկայացրեց 31 բարրառների համառոտ նկարագրությունը: Սովետական շրջանում Հ. Աճառյանը հրատարակեց նոր նախնիների (1925 թ.), Մարաղայի (1926 թ.), Ազուլիսի (1935 թ.), նոր Ջուղայի (1939 թ.), Պոլսի (1941 թ.), Համշենի (1947 թ.) և Առտիալի (1953 թ.) բարրառների ուսումնասիրությունը: Սակայն, իհարկե, դրանցով չսպառվեց հայ բարրառների ուսումնասիրությունը: Ա. Ղարիբյանը «Հայերեն բարրառների մի նոր ճյուղ» (1939 թ.) աշխատությամբ հաստատեց «Ս» ճյուղի գոյությունը և տվեց այդ ճյուղին պատկանող բարրառների (Արդվինի, Շատախի, Կարենանի, Մեղրու, Հաղրութի, Ուրմիայի) նկարագրությունը, իսկ 1958 թ. «Հայերենի նորահայտ բարրառների մի նոր խումբ» աշխատությամբ նա հայտնաբերեց Արամոյի, Քարուսի, Եզեսիայի բարրառները և տվեց դրանց գիտական բնութագիրը:

Հիմք ընդունելով ակադեմիկոս Հ. Աճառյանի՝ բարրառների ձևաբանական դասակարգումը, Ղարիբյանը հայերենի բարրառները բաժանեց յոթ ճյուղերի՝ «Ում», «Ս», «Է», «Կա», «Կր», «Հա» և գրաբարակերպ: Այս յոթ ճյուղերն իրենց հերթին նա բաժանեց երեք մեծ խմբերի: Առաջին խմբի մեջ մտցրեց այն բարրառները, որոնք ներկայի և անցյալի անկատար ձևերը կազմում են վերլուծական եղանակով, դերբայով արտահայտելով ներգոյականի իմաստը, որը նշանակում է՝ սյսինչ գործողության մեջ եմ: Այս խումբը նա կոչեց ղերբայավոր, որի մեջ մտցրեց «Ում», «Է» և «Ս» ճյուղերը: Իրկրորդ խմբի մեջ մտցրեց այն ճյուղերը, որոնք ներկան և անցյալի անկատարը կազմում են գրաբարի նույն ձևերի վրա ավելացնելով որևէ մասնիկ, որ նշանակում է կա, ահա, որով ղղձական ձևերը դառնում են սահմանականի ձևեր: Այս խմբի մեջ մտնում են «Կա», «Կր» և «Հա» ճյուղերը: Այս խումբը Ա. Ս. Ղարիբյանը կոչեց մասնիկավոր: Եվ վերջապես երրորդ խմբի մեջ դասվեց գրաբարակերպ ճյուղը, որի ուսումնասիրությունը դեռ չի խորացված ու ավարտված: Այսպիսով, Ա. Ղարիբյանը հայերենի 51 բարրառները բաժանեց երեք մեծ խմբերի և յոթ ճյուղերի: Նշենք, որ է. Բ. Աղայանը ևս բարրառների ձևաբանական դասակարգումը տվել է գրեթե նույն կերպով:

Սակայն պրոֆ. Ա. Ղարիբյանը միայն բարրառների ձևաբանական դասակարգումով չսահմանափակվեց: Նա նշեց, որ ձևաբանական դասակարգումով չի սպառվում բարրառների բնութագիրը, քանի որ շատ հաճախ բարրառները ձևաբանորեն միմյանց նմանվելով մտնում են միևնույն ճյուղի մեջ, բայց իրարից տարբերվում են հնչյունական համակարգով: Հետևապես ձևաբանական դասակարգումը չի սպառում բարրառները ճանաչելու հնարավորությունները, միաժամանակ չեն բացատրվում այն նմանությունները, որ կան այդ բարրառների հնչյունական սիստեմի մեջ, որոնք բնորոշ կերպով երևան են զայիս միայն հնչյունական կազմության մեջ: Ուստի միայն ձևաբանական դասակարգումը բավական չէ, անհրաժեշտ է նկատի առնել նաև նրանց հնչյունական դասակարգումը:

Բարրառների հնչյունական դասակարգման համար պրոֆ. Ա. Ղարիբյանը հիմք ընդունեց պայթական բաղաձայնների համակարգը և գտավ, որ «Հայերենի բաղաձայնական սիստեմը բոլոր բարրառներում փոփոխություն է կրում հիմնականում երկու տիպի տեղաշարժերի և մեկ տեղաշարժ-տեղափոխման միջոցով: Առաջին տեղաշարժը նա կոչեց ձայնեղների խլացում ( $p > պ$ ,  $q > տ$ ,  $đ > ժ$ ,  $z > շ$ ,  $q > կ$ , կամ  $p > փ$ ,  $q > փ$ ,  $đ > ց$ ,  $z > ց$ ,  $y > փ$ ,  $y > ք$ ), երկրորդ տեղաշարժը՝ ձայնեղացում և շնչեղ ձայնեղացում ( $պ > ք$ ,  $տ > դ$ ,  $ժ > ձ$ ,  $ց > ք$ ,  $կ > ք$ , կամ  $ք > ք'$ ,  $դ > դ'$ ,  $ձ > ձ'$ ,  $ց > ց'$ ,  $դ > գ$ ), իսկ այդ երկու երկույթների միաժամանակյա առկայությունը միևնույն բարրառում կոչեց տեղաշարժ-տեղափոխություն, այսինքն՝ ձայնեղների խլացում կամ շնչեղ խլացում և խուլների ձայնեղացում ( $p > պ$  կամ  $p > փ$ ,  $պ > ք$ ,  $դ > տ$  կամ  $դ > փ$ ,  $տ > դ$  և այլն):

Առաջին տեղաշարժի մեջ մտնող բարրառների բաղաձայնական համակարգը երկաստիճան ձայնալուրկ է: Երկրորդ տեղաշարժ ունեցող բարրառներում խուլ հնչյունները ձայնեղանում են, իսկ ձայնեղները կարող են դառնալ շնչեղ խուլ: Ըստ տեղաշարժ-տեղափոխության կանոնի

1 Տե՛ս «Մեղրու բարրառը», Երևան, 1954:

ձայնեղները վերածվում են խուլ կամ շնչեղ խուլ հնչյունների, իսկ խուլ հնչյունները ձայնեղանում են:

Պրոֆ. Ղարիբյանը վերջապես ըստ հնչյունական դասակարգման սահմանեց բարբառների մի խումբ ևս, որը կոչեց շորրորդ կամ անտեղաշարժ խումբ, որի բաղաձայնական համակարգը բառասկզբին փոփոխություն չի կրում: Այդ բարբառների բառասկզբի բաղաձայնական համակարգը գրաբարի նման է (բ > բ, դ > դ, ղ > ղ և այլն):

Հնչյունական դասակարգմամբ պրոֆ. Ղարիբյանը հանգեց հետևյալ եզրակացությունների: 1) բարբառների բաղաձայնական համակարգի տարբերակները ցայտուն կերպով երևան են գալիս հիմնականում բառասկզբին և հատկապես բառային հիմնական ֆոնդի բառերի հին շերտի մեջ, 2) ձայնեղները բառամիջում գրեթե բոլոր բարբառներում (բացառությամբ Ազուլիսի և մասամբ Մեղրու և Կարճեանի) վերածվում են շնչեղ խուլների, իսկ խուլները ոնգայիններից հետո վերածվում են ձայնեղների (վարդ > վարթ, որր > որփ, փորձ > փորց, վերջ > վերչ և այլն), 3) հնչյունական դասակարգումը վկայում է, որ բարբառներից յուրաքանչյուրը փոփոխության է ենթարկվել, որը գրաբարը դադարել է կենդանի խոսակցական լեզու լինելուց (X—XI դարերից սկսած)<sup>2</sup>:

Հայերեն բարբառների՝ ըստ բաղաձայնական համակարգի դասակարգումը առավել ամրոցական տեսքով պրոֆ. Լ. Ղարիբյանը ներկայացրեց «Вопросы языкознания» հանդեսում (1959, № 5) տպագրված իր հոդվածում, որով հանդես էր էջերում սկսեց բանավեճ այս հարցի վերաբերյալ: Ինչպես հայ բարբառների, այնպես էլ գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի՝ ըստ բաղաձայնական սիստեմի դասակարգման համար Լ. Ղարիբյանը հիմք է ընդունում «այնպիսիների համակարգը՝ նկատի ունենալով հնդեվրոպական նախալեզուն և բարբառների համակարգը: Այս սկզբունքով նա հայերեն բոլոր բարբառները բաժանում է յոթ խմբի, հետևյալ բաժանումով:

- I խումբ— եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ (բ, բ', փ),
- II խումբ— քառաստիճան բաղաձայնական համակարգ (բ, բ', պ, փ),
- III խումբ— երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ (բ, փ),
- IV խումբ— միջին հայերենի բաղաձայնական համակարգ (բ, պ, փ),
- V խումբ— երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ (բ, փ),
- VI խումբ— գրաբարյան բաղաձայնական համակարգ (բ, պ, փ),
- VII խումբ— երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ (պ, փ):

Հնչյունական այս դասակարգումը հավանություն գտավ մի քանի լեզվաբանների կողմից:

Լ. Ղարիբյանի բարբառագիտական գործունեության մեջ ուշադրության արժանի է նրա փորձը դասակարգելու հայերեն բարբառները ըստ բաղաձայնական համակարգի:

Անդրադառնալով հայ բարբառների առաջացման հարցին, պրոֆ. Լ. Ղարիբյանը գտնում է, որ ընդհանուր լեզուն և բարբառներն իրար համագոյակից են: Բարբառները ձգտում են միանալու ընդհանուր լեզվին: Բարբառների մի զգալի մասը ընդհանուր լեզվից անցյալներում ավելի մեծ տարբերություն է ունեցել: Իբրև բարբառ նրանք անցյալում ավելի շեշտված գծերով են հանդես եկել: Հայերեն բարբառների մի մասը գոյություն է ունեցել ընդհանուր լեզվին զուգընթաց: Հայերեն ընդհանուր լեզուն գրաբարին նախորդող մի վիճակ էր ներկայացնում: Հայ բարբառները գրաբարի հետ ընդհանուր գծեր են ունեցել: Ի վերջո, պրոֆ. Լ. Ղարիբյանը եզրակացնում է. «Բարբառների մի զգալի մասը հայերեն ընդհանուր լեզվից ճյուղավորվել են այն ժամանակ, երբ նա վերջնականապես ձևավորված գրաբարի լրիվ պատկերը շունք, հետագայում դրաբար լեզվից բարբառները յուրացրել են քերականական դանդաղ կատեգորիաների իրողություններ՝ մերելով իրենց քերականական կառուցվածքի մեջ: Ընդունելով ընդհանուր հայերեն լեզվի բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքի հիմքերը, բարբառները մշակել են իրենց սեփական քերականությունը, հայերեն լեզվի քերականության ընդհանուր հիմունքներով, բայց որոշ տարբերիչ գծերով: Նկատելի է, որ բարբառների մի շարք հատկանիշներ, որ առաջատար են ընդհանուր լեզվի քերականական հիմունքի վրա, ընդհանուր են բոլոր բարբառներին: Այդ հատկանիշները ամենակայուն հատկանիշներն են և դրանք անցնում են ընդհանուր լեզվին, մինչև իր բարբառների մասնակի հատկանիշները, ինչպես և դրաբարի սպեյիֆիկ հատկանիշները, մոտեցանք են և դրաբարից հետո առաջացած ընդհանուր լեզվի մեջ առնվել են իբրև մեծայալ, անակտիվ ձևեր, համախ միայն լեքսիկական արժեքով»<sup>3</sup>:

2 Տե՛ս Լ. Ղ. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:

3 Նույն տեղում, էջ 83:

Պրոֆ. Ա. Ղարիբյանի բարրառագիտական աշխատությունները խոշոր ներգրում հանդիսացան հայագիտության մեջ և մեծ շափով նպաստեցին մասնավորապես հայոց լեզվի ուսումնասիրությանը և ընդհանրապես հայագիտության զարգացմանն ու առաջընթացին: Հետևելով իր ուսուցչին՝ հայագիտության երախտավոր Հրաչյա Աճառյանին, Ա. Ղարիբյանը առաջ տարավ հայ բարրառների ուսումնասիրման շնորհակալ գործը, ավելին՝ հայ բարրառների առաջացման, դասակարգման և բաղաձայնական համակարգի ուսումնասիրությունը դարձավ համաշխարհային լեզվաբանական գիտության ուշադրության առարկա:

\* \* \*

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանի գիտական գործունեության երկրորդ քննադատը միջնակարգ դպրոցի հայոց լեզվի քերականության և հայերենի դասավանդման մեթոդիկայի դասագրքերն ու ձեռնարկներն են: Այս գործում անուրանալի են նրա ծառայությունները: Իսկական է ասել, որ նրա կազմած «Հայոց լեզվի քերականություն» դասագիրքը (V—VI դասարանների համար) դորձածվել է շուրջ 30 տարի (1934—1964) և ունեցել է 27 հրատարակություն:

Հիմք ընդունելով սովետական լեզվաբանական գիտության նվաճումները և հայ դպրոցի մայրենի լեզվի՝ անցյալի դասագրքերի գրական կողմերը, նա ստեղծեց դպրոցական նորմատիվ-քերականության մի կուռ, կայուն դասագիրք, որով հաջողությամբ մայրենի լեզու սովորեցին մի քանի սերունդներ: Այդ դասագրքում պարզորոշ և նպատակային կերպով ձևարանությունը առանձնացվեց շարահյուսությունից և դասագիրքը կազմվեց գիտական ու մանկավարժական ճիշտ սկզբունքով՝ վերլուծական-համադրական ուսուցման մեթոդով:

Սովետական լեզվաբանության երեսնական թվականների կարևոր նվաճումներից մեկն ասել էր, որ այդ տարիներին հիմնականում ավարտվեց մայրենի լեզվի դասագրքերի ստեղծման գործը: Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի քերականություն» դասագիրքն առաջին նոր տիպի դասագիրքն էր:

Ա. Ղարիբյանը դրադվել է նաև հայոց լեզվի ուսուցման ու դասավանդման հարցերով: 1938 թ. հրատարակվեց նրա «Քերականության ուսուցումը միջնակարգ դպրոցում»-ը, որը փաստորեն հայ դպրոցի պատմության մեջ քերականության ուսուցման առաջին մեթոդական ձեռնարկն էր: 1940 թ. լույս տեսավ Ա. Ղարիբյանի «Տարրական դպրոցի հայոց լեզվի մեթոդիկան», իսկ 1954 թ.՝ «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան»: Միջնակարգ դպրոցների ուսուցիչների և մանկավարժական բուհերի ուսանողության համար կազմված այդ շահեկան ձեռնարկը (560 էջ) նպատակ ունեւր օգնելու սկսնակ ուսուցչին՝ սխտեմավորելու իր աշխատանքը, օգտագործելու այն փորձը, որը կուտակված էր սովետական դպրոցի և սովետական մանկավարժական գիտության կողմից:

Այդ գրքում հեղինակը քննության առարկա դարձրեց հնչյունարանության, ուղղագրության, բառագիտության, բառակազմության, խոսքի մասերի, շարահյուսության, կետադրության ուսուցման ձևերն ու մեթոդները, ինչպես նաև հայերենի ուղղագրության կանոնները, քերականության ուսուցման դերը բարրառայնության դեմ պայքարելու գործում, շարադրության սխալների ու նրանց ուղղման ձևերն ու տեսակները և այլ հարցեր: Նույն գրքի վերջին՝ «Հայոց լեզվի ավանդումը 8—10-րդ դասարաններում» բաժնում հեղինակը պարզաբանեց տրոհվող լրացումների և բարդ նախադասության տեսակների տարբերակման միջոցները, նրանց ներքին կապակցության և լրացական հարաբերությունները:

Այսպիսով, Ա. Ղարիբյանը մշակեց միջնակարգ դպրոցում քերականության դասավանդման մեթոդներն ու եղանակները, տվեց լեզվի ու նրա բաժինների լեզվաբանական և մանկավարժական հիմնավորումները, հեշտացրեց քերականական կարգերի դասավանդումը. սխտեմավորեց լեզվի ուսուցման դասընթացը:

Ա. Ս. Ղարիբյանը միշտ էլ եղել է դպրոցի և ուսուցչի խորհրդատուն ու բարեկամը, նրա կազմած մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկայի ձեռնարկներն ու դասագրքերը խոշոր դեր կատարեցին մայրենի լեզվի դասավանդումը դպրոցում բարելավելու գործում:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը գրադվել է նաև հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հարցերով: Հայոց լեզվի պատմությանը վերաբերող նրա հիմնական աշխատությունը «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» է (1937), որը պետական համալսարանում և մանկավարժական ինստիտուտում հեղինակի դասավանդած «Հայոց լեզվի պատմություն» առարկայի դասընթացն է: Այստեղ ամփոփ կերպով տրված է հայոց լեզվի պատմությունը, հանգամանորեն քննության է ենթարկված հայերի և հայերենի առաջացման հարցը, շարադրված է գրաբարի

կազմավորումն ու կառուցվածքը (բառապաշարը, հնչյունարանությունը և ձևարանությունը, հույսարան դպրոցը, միջին հայերենը, հայերեն բարբառները, աշխարհարարը և գրական հայերենը)։

Այս աշխատությունը հայոց լեզվի պատմության դասընթաց կազմելու առաջին փորձն էր։ Այս գրքում Ա. Ղարիբյանը, քննադատելով հայերի ծագման միզոցիոն տեսությունը, կանգնում է այն տեսակետի վրա, որ հայերը ոչ մի տեղից չեն եկել, այլ բնիկ, բնորոշ ժողովուրդ են և կազմավորվել են պատմական Հայաստանի տերիտորիայում։ Խոսելով հայերի և հայերենի ծագման մասին, հեղինակը նշում է, որ ժողովուրդներն ու ազգերը իրենց պատմական գոյության ընթացքում մեկուսացած չեն. նրանք փոխադարձ սոցիալ-քաղաքական շփման միջոցով ազդում են միմյանց վրա ոչ միայն կուլտուրական, տնտեսական ու քաղաքական կողմերով, այլև լեզվով։ Հետևաբար յուրաքանչյուր լեզվի պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել՝ մի կողմից՝ նրա քաղաքիչ տարրերի ազդյունները և այդպիսով իսկ լուծել նրա գոյացման խնդիրը պատմա-հասարակական էությունը ու պատմականորեն կազմավորվելու պրոցեսի քննությունը, մյուս կողմից՝ լուսարանել լեզվի զարգացման ընթացքում տեղի ունեցած զանազան լեզվական փոխազդեցությունները. «Յուրաքանչյուր էթնիկական լեզու,— եզրակացնում է հեղինակը,— արտացոլում է տվյալ էթնոսի և ազգի պատմությունն իր գոյացման օրից մինչև մեր օրերը։ Այդ պատմությունն անպայմանորեն հանդիսանում է տվյալ ժողովրդի և ազգի, որպես մի միասնություն կազմող դասակարգային հասարակության պատմությունը, էթնիկական լեզուների գոյացումը արտացոլում է ժողովրդի (էթնոսի) գոյացման ամբողջ պրոցեսը։ Ուստի, նախապես է և պետք է մեկը կապել մյուսի հետ և մեկը բացատրել մյուսով։ Էթնիկական և հետագայում ազգային լեզուն իր պատմության պրոցեսում արտացոլում է նաև զանազան ժողովուրդների ու ազգերի սոցիալ-քաղաքական գործունեության հետևանքով տեղի ունեցող շփման ու մոտենցման մոմենտները՝ փոխառած լեզվածեղծումը։ Ուստի, անհրաժեշտ է լեզվի պատմության մեջ այս խնդիրն իր սրտահայտման տարրերը բնութագրել ու եղանակներով նույնպես ի հայտ բերել»<sup>4</sup>։

Այնուհետև հեղինակը սույն գրքում քննում է հայոց լեզվի զարգացման փուլերը, հաճախ սուրբ տալով ն. Մառի «լեզվի նոր ուսմունքի» դրույթներին, զբաղաբար, միջին հայերենը, բարբառներն ու արդի հայերենը «դասակարգային լեզուներ» համարելով։

Զբաղվելով հայոց լեզվի պատմության հարցերով, Ա. Ղարիբյանը տվեց հին հայերենի՝ դարբարի և ժամանակակից հայոց լեզվի զարգացման օրինաչափությունների համակարգումը։ Նրա պրպտումներն ու հետազոտությունները նրան բերեցին այն համոզման, որ զբաղաբարի թերման ժամանակ հանդես են գալիս երեք ձևություններ, որոնք դրսևորվում են ներքին ու արտաքին թերմաների (հեղինակի ստեղծած տերմինն է) ձևերում։ Սրանով նա փորձեց տալ հայոց լեզվի տիպարական բնութագիրը։

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրման խնդիրներին վերաբերող նրա աշխատություններից մի քանիսը նվիրված են հայերենի հնդեվրոպական հնչյունական համակարգի պարզաբանմանը, մասնավորապես՝ հայոց լեզվի բաղաձայնական համակարգի բնութիին, ինչպես նաև պատմական բարբառադիտության պրոբլեմներին։

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրությանը զուգընթաց պրոֆ. Ա. Ղարիբյանն զբաղվել է անցյալի գիտական ժառանգության և ակնավոր հայագետների զնահատման հարցերով։ Նա իր հողվածներին մեջ հանգամանորեն քննել է անվանի հայագետներ Հրաչյա Աճառյանի և Մանուկ Աբեղյանի հայագիտական ու լեզվաբանական գործունեությունը, վեր հանելով նրանց կատարած հուկայական դերը հայագիտության զարգացման մի շարք բնագավառներում։

Խոսելով Մ. Աբեղյանի բերականագիտական ժառանգության մասին, Ա. Ղարիբյանը նշում է, որ «նա զբաղվել է գերազանցապես արդի հայերենի գիտական և գործնական խնդիրներով, արձագանքել է հայոց լեզվի արդի խնդիրների լուծման վեճերին և մշակել է հիմնականում աշխարհարարի բերականության պրոբլեմները։ Այդ աշխատանքով զբաղվելով, Մ. Աբեղյանը այնքան մեծ «գուտ է տվել հայերեն լեզվին, որքան իր նախորդներից ոչ մեկը։ Հայ Բերականագիտությունը իՄ. Աբեղյանը բարձրացրել է մի նոր աստիճանի վրա» (ընդգծումը հեղինակինն է—Հ. Կ.)<sup>5</sup>։

Պրոֆ. Ղարիբյանը, վերլուծելով հայ բերականագիտության անցած ուղին և արդի վիճակը, իրավացի կերպով գտնում է, որ Մ. Աբեղյանը հանդիսացավ հայերենի շարահյուսությունը մշակողն ու կատարելագործողը, նրա շնորհիվ շարահյուսությունը գիտական կերպարանը ստացավ, ճշտվեց, ձևավորվեց և դարձավ գիտական դիսցիպլին, Մինչև Աբեղյանը հայ ոչ մի լեզվաբան այն-

<sup>4</sup> Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937, էջ 5։

<sup>5</sup> «Գրական-բանասիրական հետախուզումներ», դիրք առաջին, Երևան, 1946, էջ 149։

սխախտությունները չէր քննել բերականական հասկացությունները, չէր դուրս բերել քերականությունը նորմատիվ վիճակից ու հասցրել փիլիսոփայական այնպիսի բարձրության, որպիսի բարձրության հասցրեց Մ. Արեղյանը: «Արդի հայերենի ուսումնասիրության որ բնադավան էլ վերցնենք,— եզրակացնում է Ա. Ղարիբյանը,— կտեսնենք Մ. Արեղյանի մոտ մի նոր աստիճանի վրա բարձրացված... Շատ սերունդներ շատ բան ունեն սովորելու նրա աշխատություններից, իսկ սովետական լեզվաբանների նոր ու շնորհապարտ սերունդը իր աշխատությունների մեջ միշտ կհիշի նրա վաստակը»:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը մեծ ու արժեքավոր լուծա ունի հայոց լեզվի ուղղագրության, ուղղախոսության, տերմինների մշակման և հատկապես բառարանագրության մեջ: 1940 թ., հայոց լեզվի ուղղագրության մասնակի բարեփոխությունից հետո, նա հրատարակեց «Ուղղագրական համառոտ բառարանը», որը հետագայում վերամշակվելով և համալրվելով՝ մի քանի անգամ վերահրատարակվել է և այսօր էլ ուղղագրության միակ գործածական բառարանն է: Ուղղագրության հարցերում Ա. Ղարիբյանն առաջնորդվել է այն սկզբունքով, որ ուղղագրությունը Ռեակտեական օրինաչափություններից բխող, ավանդականորեն պահպանված, հասարակականորեն ճանաչված և պետականորեն ընդունված ու օրինականացված ուղիղ գրելու կանոնների համակարգն է:

Ա. Ղարիբյանի լույս ընծայած ուղղագրական բառարանները (որոշ հրատարակություններ Գ. Պարիսի կամ Գ. Շեկյանի հեղինակակցությամբ) նպաստեցին ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության կանոնների կայունացմանը և զգալի շափով բավարարեցին հասունացած պահանջը: Այդ բառարանի վերջին հրատարակությունների մեջ տրված են քերականական և նշյունափոխական այն ձևերը, որոնք ուղղագրական դժվարություններ են հարուցում: Բառարանում գետնադրված են նաև այն բառերը, որոնց գրության մեջ վերջին տարիներին փոփոխություն են մտցրել տերմինաբանական կոմիտեն ու մամուլը:

Բառարանի սկզբում դրված են ձայնավորների, երկնշյունների, ձայնակապի, օժանդակ բայի, բաղաձայնների, բառարարության, թվականների ուղղագրությանը, օտարազգի և ռուսերեն բառերի տառադարձությանը, տողադարձին, մեծատառերի գործածությանը վերաբերող կանոնները և կետադրության նորմաները: Որոշ հրատարակությունների մեջ տրված է նաև համեմատարար կայուն արտասանություն ունեցող բառերի ուղղախոսական համառոտ բառարանը, որը նպաստում է ուղղախոսության կարգավորմանը և կայունացմանը: Ավանդական գրություն ունեցող գրեթե բոլոր բառերն ընդգրկված են բառարանում:

«Ուղղագրական բառարանից» հետո 1957 թ. լույս տեսավ Ա. Ս. Ղարիբյանի «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույցը» (Գ. Պարիսի հեղինակակցությամբ), որը զալիս էր օգնելու հայոց լեզվի ուսուցիչներին, գրական աշխատանքով զբաղվողներին, հրատարակություններին և այլ կազմակերպություններին ու անհատներին: Ուղեցույցի մեջ համապատասխան օրինակներով բացատրված ու հիմնավորված են ուղղագրական, քերականական ու կետադրական կանոններն ու նորմաները, տրված են դրանց կոնկրետ դրսևորումներն ու գործածման ձևերը:

Հայոց լեզվի ուղղագրական, քերականական կանոնները և կետադրական նորմաները ուղեցույցի մեջ շարադրված են տարբեր ժամանակներում տերմինաբանական կոմիտեի ընդունած սորոլումների և հայոց լեզվի ավանդաբար մշակված օրենքների հիման վրա: Սույն գրքի հրատարակումն անկասկած նպաստեց ժամանակակից հայոց լեզվի գործնական քերականության և ուղղախոսության հարցերի մշակմանը, ուղղագրության կանոնների կայունացմանը և առիթ հանդիսացավ այդ հարցերը դիտական հասարակայնության լայն քննարկման առարկա դարձնելու և վերջնականապես լուծելու համար:

Մայրենի լեզվի գործնական քերականության հարցերը մշակելու և ուսուցումը հեշտապես ներդրում էր հոգալ նաև հայոց լեզուն շփոթեցողներին սովորեցնելու մասին: Այս ուղղությամբ ևս պրոֆ. Ա. Ղարիբյանը նշանակալի գործ կատարեց՝ հրատարակելով իր «Հայոց լեզվի համառոտ դասընթացը» (Ռուսերեն լեզվով): Այդ ինքնուսույց ձևով, որը կազմված է մեթոդական և մանկավարժական մատչելի եղանակով, ունեցավ մի քանի հրատարակություն և մեծ օգնություն հանդիսացավ ինքնուսուցմամբ հայոց լեզու սովորողներին:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել տերմինաբանության, լեզվաշինության աշխատանքներին. մի քանի նախագծեր է ներկայացրել տերմինաբանական կոմիտեին՝ սուսական և օտարազգի հատուկ անձնանունների շեշտադրության, ռուսական жѐ, шѐ, шѐ, яѐ, ъѐ հնչյունական կապակցությունների հայերեն տառադարձության, երկտեսակ գրություն ունե-

ցող բառերի ուղղագրության մասին<sup>6</sup>, ղեկավարել է մի շարք մասնագիտական տերմինարաններ կազմելու և խմբագրելու աշխատանքները:

Բարբառագիտական աշխատություններից հետո պրոֆ. Ա. Ղարիբյանի գիտական ժառանգության մեջ կարևորագույնը, անկասկած, հանդիսանում է վերջերս լույս տեսած ոուս-հայերեն մեծածավալ բառարանը, որի մեջ օգտագործված էն ոուս-հայերեն բառարանագրության փորձի երկու հարյուր տարվա լավագույն նվաճումները: Բառարանի ոուսական բաժնի բառացանկը բովանդակում է գրական լեզվի հարյուր հազար բառ և դարձվածք: Թարգմանական՝ հայկական մասը մեծ արժեք է ներկայացնում, որտեղ դրսևորված են հայոց լեզվի բառակազմական ճկունությունը, հարստությունն ու ճոխությունը, հայերեն բառերի ու դարձվածքների նշանակության իմաստային առումներն ու նրբությունները, կայուն և ազատ բառակապակցությունները:

Սովետական շրջանում լույս տեսած ոուս-հայերեն բառարաններից հետո (երկհատորյակը 1933—1935 թթ. և քառահատոր՝ 1954—1958 թթ.), հայ բառարանագրության պատմության մեջ ակնբերն նվաճում է այս բառարանը, որի մեջ ամփոփված են նաև վերջին երկու տասնամյակում կյանք մտած նորակերտ բառերն ու բառակապակցությունները: Ա. Ղարիբյանը բառարանը կազմելիս հնարավորություն է ունեցել օգտագործելու ժամանակակից գրական ոուսերենի 17 հատորանոց բառարանը (1950—1965), ուս նշանավոր բառարանագիր Ս. Բ. Օժեգովի ոուսերեն բացատրական բառարանի մի հատորյակը, ինչպես նաև վերջին տասնամյակում լույս տեսած բազմաթիվ և բազմալեզու մասնագիտական բառարաններն ու տերմինարանները, որոնք նախորդ բառարանագիրները չէին կարող ձեռքի տակ ունենալ: Հեղինակը կարողացել է հմտորեն ընտրել ոուսաց և հայոց լեզուների նոր ստեղծված հարստությունները:

Բեղմնավոր ստեղծագործական ուղի է անցել ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանը: Նա գործել է պատմական նոր իրադրությունների պայմաններում. նոր խնդիրների գործնական ու տեսական լուծում պահանջող ժամանակաշրջանում: Նրա անցած ուղին իր ելևէջներով ու դժվարություններով պայմանավորված էր սովետական լեզվաբանության առանձնահատկություններով: Մեր սոր հասարակարգը իր զարգացման տարբեր շրջաններում հրատապ խնդիրներ էր դնում լեզվաբանական գիտության առաջ: Պրոֆ. Ա. Ղարիբյանը ևս նվիրվում էր այդ խնդիրների կատարմանը:

Այդ հարցերի լուծման ընթացքում, որոնումների մեջ նա երբեմն շեղվել է, վրիպել, բայց միշտ առաջ է քայլել, առաջավորին ու նորին հետևել: Պրոֆ. Ա. Ղարիբյանը իր երկարամյա գիտական գործունեությամբ նշանակալից դեր է խաղացել սովետահայ լեզվաբանության և հատկապես բարբառագիտության մեջ: Իր բազմակողմանի գիտական հետաքրքրություններով, հարուստ գիտելիք՝ նրով, եռանդով նա մեծապես նպաստել է սովետական լեզվաբանական գիտության առջև դրված գործնական խնդիրների լուծմանը, իր ուսումնասիրություններով հարստացրել հայագիտությունը: Արարատ Ղարիբյանից դեռ շատ սպասելիքներ ունի մեր գիտական հասարակայնությունը:

<sup>6</sup> Տե՛ս Լ. Լ. Բարսեղյան, Տերմինաբանական ուղեցույց, Երևան, 1964 և Ս. Ղազարյան, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945: